


ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

ԺԵ. ՏԱՐԻ 1901

Տարեկան 10 ֆր. ոսկի = 4 րբ.:
Կիսամեայ՝ 6 ֆր. ոսկի — 2 րբ. 50 կ.:
Մէկ թիւ կ'արժէ 1 ֆր. — 50 կ.:

ԹԻՒ 2, ՓԵՏՐՈՒԱՐ

2130

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

### ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

### ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ



Անցեալ տարի, եթէ չեմ սխալիր, առաջին անգամ "Բիւրակն„ի մէջ գրուեցաւ Երուսաղէմի Հնագոյն Աւետարանին մասին, յորմէ ուրիշ թերթեր եւ հանդէսներ արտատպեցին[1]: Ամէնէն շահագրգիռ խնդիրն էր ստուգել, թէ՝ Մոսկուայի՞նը, թէ Երուսաղէմինն է հնագոյն: Առաջնոյն թուականն է, գրչի յիշատակարանէն քաղուած, ՅԼԶ = 887. պէտք է խոստովանիլ, որ Երուսաղէմի Աւետարանը չունի գրչէն յիշատակարան, որովհետեւ վերջէն թուղթ ինկած կ'երեւայ. բայց ասոր փոխարէն Թղ. 7ա զարդախորանի մը երեք դատարկ սիւնակաց ձախ կողմի սիւնակին մէջ գրուած է տարբեր գրչաւ ու թանաքով, "Հյց. թուական ԾԱ ։։ ՋՃԲ ։։ գրեցաւ յԱւձի յաւուրս Մուշեղի։ Գիրգոր Երէցէ„. Միեւնոյն թուականը կրկնուած է Աւետարաններուն վերջացած տեղերը: Այս մասին ասկէ աւելի ըսելիք չունիմ, ուստի ի բաւականութիւն բանասիրաց կ'անցնիմ Աւետարանի նկարագրութեան եւ ըրած բաղդատութեանցս արդեան:

յԵրուսաղէմ 1901 Յունուար 15: Ս. Ծ. Խ.:

* *
*

ԹՈՒՂԹՔ՝ 236: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 42×29: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւրը՝ 29×9: – ՏՈՂՔ՝ 20: – ԹԵՐԹՔ՝ 1=36, իւրաքանչիւրը 5 թուղթ. (ա՝ 7, բ՝ 4, գ՝ 7, ծ՝ 4, ղ՝ 7, տ՝ 3.) Թերթահամարք հակառակ սովորականին՝ վերին լուսանցքներում գունաւոր շրջանակաց մէջ նշանակուած են: – ՆԻՒԹ՝ մագաղաթ, ողորկեալ ու սպիտակ, յաճախ թանձր ու մերթ նուրբ: – ԿԱԶՄ՝ փայտեայ կաշէպատ. առաջին երեսն երկաթազամ: ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ, քիչ տեղեր խոնաւութենէ դեղնած. Թղ. 2. Կիսախորանին կէսը կտրուած. Թղ. 145. վարի կողմէն պատռած, ա՝. սիւնակէն մէկ տող գնացած է. Թղ. 60, 62, 72, 75 պատռուած ու կարուած են, ստորին լուսանցքները մաշած են, եւ տեղ տեղ թղթեր եւ ամբողջ թերթեր պակսած են, ինչպէս գ, զ, է, ը, թ՝ թերթերը, ըստ այսմ աւետարաններէն կը պակսին. Մատթ. գ. 11, դ. 7, ե, 32, է. 4, ը. 3, ժա. 23, ժգ. 12–23, ժե. 33, իզ. 53: Մարկոս. դ. 13–29: Ղուկաս. Ա. 8–22: Յովհ. գ. 62, ը. 23: ժզ. 4—16: – ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: – ԳԻՐ՝ Մեսրոպեան բուն երկաթագիր: – ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ Մատթէոսի ու Ղուկասու առաջին էջերը՝ կէտաղբեալ գունաւոր զարդագիրք. Մարկոսի եւ Յովհաննու առաջին էջերը խոշոր գլխագիր, ինչպէս եւ համարներու սկզբնատառք: ԽՈՐԱԳԻՐՔ սեւ միջին երկաթագիր, նաեւ համեմատական տախտակք, աւետարանացոյցք եւ լուսանցքներում համարանիշք, ըստ հին բաժանման: Մարկոսի եւ Յով-

[1] Տես Հանդ. Ամսօրեայ 1900, էջ. 355:

digitised by A.R.A.R.@

*հաննու սկիզբները, զունաւոր հորիզոնական հաստ գծի մը վրայ համազոյն փոքրիկ կիսակամարներ, 12—13 հատ գծուած ու խորագիրք անոնց մէջ գրուած են վանկատեալ: — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ Թղ. 2ա—8ա, համեմատական տախտակք Եւսեբեայ նախադրութեամբ: — ՆԿԱՐՔ՝ Թղ. 1բ, զունաւոր մեծ շրջանակի մէջ խաչ, որոյ մէն մի թեւերէն քաշուած զոյգ շառաւիղներուն ծայրերուն վրայ փոքրիկ շրջանակներ. Թղ. 7բ—8ա, կիսախորանաց տակ մէյ մէկ զոյգ նկար, թերեւս աւետարանչաց Թղ. 8բ, քառակուսի շրջանակաց մէջ երեք նկար, շատ անարուեստ: — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 1ա: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԱ — 602: — ՏԵՂԻ՝ Օձ քաղաք: — ԳՐԻՉ՝ Գրիգոր երէց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քուն գրչէն չկայ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ Տիգրանեան մկրտիչ Եպիսկոպոսն ըստ իւր խոստման յիշատակած է 1872 Սրբոց Յակովբեանց Թանգարանին "ի ձեռն Մինասեան Յովհաննէս Էֆէնտիի:*

**Մատեանս է Ա-երեւան:**

Թղ. 1բ —8բ. Համեմատական տախտակք եւ նկարք: Թղ. 9ա. Աւետ. ըստ Մատթէոսի: Թղ. 41ա. Աւետ. ըստ Մարկոսի, չունի Ժզ. 9—20: Թղ. 90բ². Աւետարանացոյցք Մարկոսի գլխոց: Թղ. 91ա—բ. զունաւոր զոյգ կիսակամարներու տակ, երեքական սիւներով՝ 91ա. "Աւետարանացոյցք Մատթէոսի. Ա. Ազգահամարն: . . . լա. Եպիսկոպոսացն. լգ. վարդապետացն, լէ. չնացողացն„ եւն: Թղ. 91բ. "Աւետարանացոյցք Ղուկայ. Ա. քահանայութիւն Զաքարայ: Բ. Աւետեաց կուսին: Գ. Տեառնընդառաջին„ եւն: Թղ. 92ա. Աւետ. ըստ Ղուկայ: Թղ. 178բ. "Աւետարանացոյցք Յովհաննու„, ըստ առաջնոց զունաւոր կիսակամարներու տակ: Թղ: 179ա. Աւե. ըստ Յովհաննու չունի "իբր կնոջն շնացելոյ„: Վերջը՝ Թղ. 235բ². "Երկրորդ գումբեղային, քանն անօրէնութեան եգին ի վերայ իմ. Աւե. ըստ Ղուկա ո՞վ է մեծ, բազմեալն, եթէ: Թղ. 236ա¹—բ². զունաւոր կիսակամարներու տակ. "Խրատ սրբոյ աւետարանիս կարգելոյ, կիւրակէ, որ քան զյայտնութիւնն առաջի հանդիպի. Աւե. ըստ Ղուկա. Քանզի բազումք„ եւն: Վերջը՝ "Մեծի ուրբաթու գիշերուն առաջին գումբեղային՝ իշխանք ժողովրդոց ժողովեցան: Ճշմարիտ իմն այն է, զոր կերիցն է կարգել, որ նախ հրամայէ ասել հնգետասան սաղմոս Գ. Գ. ի մի բովանդակեալ, որ կատարեն հնգետասան Սաղմոսի Խ. գումեղայ: Արդ՝ ըստ տկար լսելեաց մերոց այսպէս կատարեմք, ի մէջ գումեղայիցն ընթեռնումք աւետարան ըստ Յովհաննու ԺԺԸ. ո՛չ է ծառայ մեծ քան զվարդապետ„:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ վերինէն զատ Թղ. 91ա. ստորին լուսանցքում, "Թուին Հայոց ԾՄԱ. յաւուրս Մուշեղայ տեառն Տարօնոյ Յոձ քաղաք„: Թղ. 2ա. կողմնական լուսանցքում, անհարթ նոտրագրով՝ "Ես Մարիամս ծառայ սուրբ Յովանեսիս, որ տամ խաչոճ յամին տարի Բ. գրամ„:

* * *

Երկաթագիր կրկին Աւետարանները բաղդատեցի միայն չորս գլխով, այն է իւրաքանչիւր աւետարանէն մէյ մէկ գլուխ, եւ Երուսաղէմինն աւելի համաձայն գտայ տպեալին, ; երու յապաւում, կամ աւելադրութիւն նուազ է Երուսաղէմինին մէջ, Ըն, Էըն, ու բայերու անկատարներուն մէջ երկուքն ալ փոխանակ էի, է կը գործածեն. Հրեշտակ բառը միշտ եով գրուած է առ մեզ: Գրչագրաց բաղդատեալ գլուխները՝ բաղդատած եմ Երուսաղէմինը նաեւ տպագրեալին հետ, ահաւասիկ կրկին բաղդատութեանց արդիւնքները ստորեւ կ'ամփոփեմ:

## ՄԱՏԹԷՈՍ ԻԷ

| Երուսաղէմ. | Մոսկուայ. |
|---|---|
| 3. Առ քահանայապետսն եւ ծերս ժողովրդեանն | 3. առ քահանայապետսն եւ առ ծերս |
| 9. Եւ առին զերեսուն արծաթին | 9. Եւ առին զերեսուն արծաթիսն |
| 25. դուք գիտասջիք | 25. դուք գիտէք |
| 29. ողջ Եր թագաւոր Հրէից | 29. ողջ լեր թագաւոր Հրէից |
| 31. մերկացուցին ի նմանէ զքղամիդն | 31. մերկացցին ի նմանէ զքղամիդն |
| 46. Եւ զիննե ժամին գոչեաց | 46. Եւ զիննե ժամուն գոչեաց |
| 47. ամանք յայնցանէ | 47. ոմանք յայնցանէ |
| 48. Եւ ըմպել նմա | 48. տայր ըմպել նմա |
| 54. իբրեւ տեսին զշարժումն | 54. Իբրեւ տեսին զշարժմանն |
| 54. Եւ արդարեւ Աստուծոյ որդի էր սա | 54. Արդարեւ որդի Աստուծոյ էր սա |
| 56. Ի Գալիլեէ պաշտել զնա | 56. Ի Գալիլեա պաշտել զնա |
| 56. Եւ Յովսիա մայր | 56. Եւ Յովսէ մայրն |
| 57. Այր մի մեծատուն յԱրիմաթեա | 57. Այր մի մեծատուն որ յԱրեմաթեայ |
| 60. Եւ առեալ զմարմին Յովսէփ | 60. Եւ առեալ զմարմինն Յովսէփայ |
| 60. Զոր փորեաց ի վէմ | 60. Զոր փորեաց ի վիմ |

## ՄԱՐԿՈՍ Ա.

| Երուսաղէմ. | Մոսկուայ. |
|---|---|
| 2. Որպէս եւ գրեալ է յԵսայի մարգարէ | 2. Որպէս եւ գրեալ է Եսայեա մարգարէէ |
| 2. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ | 2. Ահաւասիկ առաքեմ զհրեշտակ իմ |
| 2. Որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քոյ | 2. Որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո |
| 5. Եւ Երուսաղէմացիք ամենեքեան | 5. Եւ Երուսաղէմացիքն ամենեքին |
| 10. զՀոգին Աստուծոյ էջեալ աղաւնակերպ զի իջանէր ի վերայ նորա | 10. զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զաղաւնի ի վերայ նորա |
| 11. Ձայն եղեւ յերկնից եւ ասէ, դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ: | 11. Ձայն եղեւ յամպոյ եւ ասէ, դու ես որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: |

---

1 Երուսաղէմի օրինակին մէջ գրեթէ ամէն տեղ այսպէս կը գրուի եւ Մոսկուայի օրինակին մէջ ալ ըստ վերնոյն:

digitised by A.R.A.R.@

| Երուսաղէմ | Մոսկուայ |
|---|---|
| 13. Եւ էր նա անդ զաւուրս քառասունս փորձել ի սատանայէ | 13. Եւ էր անդ աւուրս[1] քառասուն փորձել ի սատանայէ |
| 14. Եկն Յիսուս ի Գալիլեա | 14. Եկն Յիսուս ի Գալիլեա |
| 16. Զի արկեալ էր նոյն ուռկանս ի ծով | 16. Զի արկեալ էր ուռկանս ի ծով |
| 17. Ասէ ցնոսա Յիսուս, եկայք զկնի իմ | 17. Ասէ ցնոսա, եկայք զկնի իմ |
| 21. Եւ մտանեն ի կափառնաում, եւ իսկ եւ իսկ ի շաբաթու մտեալ ի ժողով | 21. Եւ եկին մտանէին ի կափառնաումն եւ իսկ եւ իսկ ի շաբաթուն մտանէր ի ժո |
| 23. յորում այս պիղծ գոյր ի նմա | 23. Որոյ այս պիղծ գոյր ի նմա |
| 24. Գիտեմք զքեզ, ով ես սուրբն Աստուծոյ։ | 24. Գիտեմք զքեզ. ով ես դու սուրբդ Աստուծոյ։ |
| 34. Եւ բժշկեաց զբազում հիւանդս | 34. Եւ բժշկեաց զամենայն հիւանդութիւն |
| 34. Եւ ոչ տայր խօսել դիւացն | 34. Եւ ո՛չ տայր թոյլ խօսել նոցա |
| 36. Եւ գնաց զհետ նորա Սիմովն եւ որ | 36. Եւ գնացին զհետ նորա Սիմովն եւ որ |
| 42. Գնաց ի նմանէ բորոտութիւնն | 42. Գնաց ի նմանէ բորոտութիւն նորա |
| 44. Զգոյշ լեր, մի՛ ինչ ումեք ասիցես | 44. Զգոյշ լեր, մի ումեք ասիցես |
| 45. Մինչ ոչ եւս կարող լինել նմա | 45. Մինչեւ ոչ եւս կարող լինել նմա. |

## ՂՈՒԿԱՍ Բ

| Երուսաղէմ | Մոսկուայ |
|---|---|
| 7. Եւ պատեաց ի խանձարուրս | 7. Պատեաց զնա ի խանձարուրս |
| 7. Տեղի իջաւանին | 7. Տեղի իջավանի |
| 8. ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք | 8. ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք |
| 9. Եւ փառք Տեառն ծագեցան | 9. եւ փառք Տեառն ծագեցին |
| 10. վասն բանիցն զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն | 10. վասն բանիցն զոր խօսէին ընդ նոսա հովիւքն |
| 21. Որ կոչեցեալն էր ի հրեշտակէն | 21. որ կոչեցեալ էր նմա ի հրեշտակէն |
| 24. Սուրբ Տեառն կոչեսցի | 24. սուրբ Տեառն կոչեսցի |
| 25. Եւ էր այրն այն արդարեւ | 25. Եւ էր այրն արդարեւ |
| 27. Առնել նոցա ըստ սովորութեան | 27. առնել ըստ սովորութեան |
| 29. Արդ՝ արձակես զծառայս քո. Տէր | 29. Արդ՝ արձակես Տէր. զծառայս քո |
| 42. Իբրեւ եղեւ նորա ամք երկոտասան | 42. Իբրեւ եղեն ամք երկոտասան |
| 46. Զարմանային ամենեքեան, որ լսէին ի նմանէ, ընդ իմաստութիւն եւ ընդ պատասխանիս նորա | 46. Զարմանային ամենեքին ընդ իմաստութիւն նորա եւ ընդ պատասխանիս |
| 47. Զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ | 47. Զի՞նչ գործ գործեցեր ընդ մեզ |
| 47. Տառապեալք խնդրեաք զքեզ | 47. Տառապելով խնդրեաք զքեզ |
| 51. Եւ շնորհօք յԱստուծոյ էր ի մարդկանէ | 51. Եւ շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա |

## ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ

| Երուսաղէմ | Մոսկուայ |
|---|---|
| 1. Գնաց յայնկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեա | 1. Գնաց յայնկոյս ծովուն Տիբերեա |
| 9. Այլ զի՞նչ է առ այդչափ մարդիկ | 9. Այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկ |
| 42. Ո՞չ սա է որդին Յովսեփայ | 42. Ո՞չ սա է որդին Յովսեփայ Յիսուս |
| 42. Իսկ արդ զիա՞րդ ասէ թէ | 42. Իսկ զիա՞րդ ասէ, եթէ |
| 44. Հայրն որ զիս նա առաքեաց | 44. Հայրն որ զիս առաքեաց |
| 45. Ամենայն որ լսէ ի Հօրէ եւ ուսանի | 45. Ամենայն որ լսէ եւ ուսանի ի Հօրէ |
| 48. Ես եմ հացն կենաց | 48. Ես եմ հացն էջեալ յերկնից |
| 50. Որ ուտիցէ ոք ի սմանէ. մի մեռանիցի | 50. Որ ուտիցէ ի սմանէ, մի մեռցի յաւիտեան |
| 51. Ես եմ հացն կենդանի, որ յերկնից էջեալ է, եթէ ոք | 51. Ես եմ հացն կենդանի, եթէ ոք |
| 69. Կերան հարքն ձեր զմանանայն եւ մեռան. | 69. Կերան հարքն ձեր զմանանայն յանապատին եւ մեռան |
| 69. Բազումք յաշակերտացն իբրեւ լուան | 69. բազումք յաշակերտացն նորա իբրեւ լուան |

¹ Յարգելի Խալաթեանցը Դ. նախադիրով կարդացած է։

## Բ.

## ՄԱՏԹԷՈՍ ԻԷ.

| Երուսաղէմ | Տպեալն ի Վենետիկ |
|---|---|
| խորհուրդ արարեալ գնեցին այնու | խորհուրդ արարեալ գնեցին այնու |
| Եւ առին զերեսուն արծաթին | Եւ առին զերեսուն արծաթին |
| զԵղիա կարդայ | զԵղիա կարդայ դա |
| Եւ վաղվաղակի մի ոմն ընթացեալ | Եւ վաղվաղակի մի ոմն ընթացաւ |

## ՄԱՐԿՈՍ Ա.

| Երուսաղէմ | Տպեալն ի Վենետիկ |
|---|---|
| 1. Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի | 1. Սկիզբն Աւետարանի ... որդւոյ Աստուծոյ[1] |
| 2. Որպէս եւ գրեալ է յԵսայի մարգարէի | 2. Որպէս եւ գրեալ է ի մարգարէս |
| 9. Մկրտեցաւ ի Յորդանան ի Յովհաննէ | 9. Մկրտեցաւ ի Յովհաննէ ի յորդանան |
| 13. Փորձել ի սատանայէ | 13. Փորձեալ ի սատանայէ |
| 27. Մինչեւ հարցանել ընդ միմեանս | 27. Մինչեւ հարցին ընդ միմեանս |
| 41. Մերձեցաւ ի նա եւ ասէ | 41. Մերձեցաւ ի նա եւ ասէ ցնա |

## ՂՈՒԿԱՍ Բ.

| Երուսաղէմ | Տպեալն ի Վենետիկ |
|---|---|
| 9. Փառք Տեառն ծագեցան | 9. Փառք Տեառն ծագեցին |
| 38. Խօսէր ընդ ամենեսեան | 30. Խօսէր զնմանէ ընդ ամենեսին |
| 42. Իբրեւ եղեւ նորա ամք երկու... | 42. Իբրեւ եղեն նորա ամք |
| 48. Զի՞ խնդրէ՞ք զիս | 48. Զի՞ խնդրէիք զիս |
| 49. Զոր խօսէր ընդ նոսա | 49. Զոր խօսեցաւ ընդ նոսա |

## ՅՈՎՀԱՆՆԷՍ Զ.

| Երուսաղէմ | Տպեալն ի Վենետիկ |
|---|---|
| 2. Եւ զհետ նորա երթայր ժողովուրդ | 2. Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ |
| 8. Ասէ ցնա մի յաշակերտաց նորա | 8. Ասէ ցնա մի յաշակերտացն նորա |
| 9. Այլ զի՞նչ է առ այդչափ մարդիկ | 9. Այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկ |
| 19. Տեսանէին զՅիսուս զի գնայր ի վերայ | 19. Տեսանէին զՅիսուս զի գնայր ի վերայ ծովուն |
| 22. Չեր Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն | 22. Չեր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն |
| 29. Հաւատասջիք յայն, որ առաքեացն զիս[2]։ | 29. Հաւատասջիք յայն, զոր առաքեացն նա։ |

¹ Որդւոյ Աստուծոյ Մոսկուայի օրինակն ալ չունի. բայց երեւի յարգելի Խալաթեանցի աչքէն վրիպած է։

² Երուսաղէմի գրչագրին մէջ կը պակսի 40դ համարը, «Այս են կամք Հօր իմոյ եւն»։

digitised by A.R.A.R.@